ՀԱՅ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

25.04.2024 17:12

2024 թվականի ապրիլի 25-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում «Փաստաբանների իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդման հիմնախնդիրները ժամանակակից մարտահրավերների պայմաններում» թեմայով:

Բացման խոսքով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը:

Միջոցառման մեկնարկին ողջույնի խոսքով հանդես են եկել նաև Փարիզի փաստաբանների միության նախագահ Պիեռ Հոֆֆմանը և Օ դը Սենի փաստաբանների միության նախագահ Իզաբել Կլանե Դի Լամանին շնորհակալություն հայտնելով հայ գործընկերներին՝ երկու երկրների փաստաբանական ինստիտուտների համար կարևոր թեմայով քննարկում կազմակերպելու համար:

Այնուհետև բովանդակային զեկույցներով հանդես են ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներ Արման Թաթոյանը, Սերգեյ Մարաբյանը, Գևորգ Վիրաբյանը, Դավիթ Մելքոնյանը, Ֆրանսիայի Փարիզի և Օ դը Սենի փաստաբանների միությունների ներկայացուցիչներ Վենսան Նիոդեն, Ֆաբիեն Առաքելյանը, Քրիսթիան Ֆեղալ-Շուլը և Միշել Գիշաղը:

Ի թիվս այլնի, շոշափվել են Արցախի փաստաբանների կարգավիճակի վերաբերյալ խնդիրները, փաստաբանական գաղտնիքի պահպանման խնդիրները և փաստաբանական ինստիտուտի դերակատարումը այդ խնդիրների լուծման համատեքստում, արհեստական բանականության կիրառման արդյունքում ծագող խնդիրները, ինչպես նաև էլեկտրոնային արդարադատության համակարգում արդյունավետ մարդու իրավունքների պաշտպանության ռիսկերը:

Միջոցառման ավարտին՝ ամփոփիչ խոսքում, երկու երկրների գործընկերներն արձանագրել են, որ քննարկումների ու զեկույցների արդյունքում իրականացված փորձի փոխանակումն առանձնակի կարևոր էր ինչպես մասնագիտական, այնպես էլ երկկողմ հարաբերությունների և հետագա համագործակցությունների խորացման առումով:

ՀՀ փաստաբանների պալատում նաև հանդիպում է տեղի ունեցել Արցախի փաստաբանների և Ֆրանսիայի փաստաբանների միջև: Քննարկվել են Արցախի փաստաբանների համար մտահոգիչ մի շարք առանցքային հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })